

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԱՐԳԱՍԱԿՈՐՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

Հայտնի է, որ ֆրանսերենի մակբայները կազմվում են ածականների հիմքի վրա: Որո՞նք են, սակայն, այն պայմանները, որոնց դեպքում կարելի է ածականից մակբայ ստանալ: Հարցը վիճահարույց է, քանզի լեզվաբանների կարծիքները ոչ միշտ են համընկնում: Նկատելի է երկու հիմնական մոտեցում: Ոմանք, ընդունելով բառարանագրային սահմանափակումները, մակբայացման երևույթի համար որպես անհրաժեշտ և հիմնական նախապայման առաջ են քաշում ածականի հենքի վրա -ment-ով ածանցման պահանջը, մյուսները հակված են այն մտքին, թե ցանկացած ածական, առիթը ներկայանալու դեպքում, կարող է մակբայանալ: Հիրավի, միակողմանի կլիներ մակբայների գոյությունը պայմանավորել միայն -ment-ով ածանցմամբ: Եթե բառարանում գրանցված ածականները համեմատենք -ment ածանցով մակբայների հետ, կտեսնենք, որ ածականների թիվն անհամեմատ մեծ է, քան համապատասխան մակբայների թիվը: Ընդ որում, ժամանակակից կիրարկությունը ցույց է տալիս, որ գործածական շատ ածականներ -ment-ով համապատասխան մակբայներ չունեն, ավելին, գոյություն ունեցող մակբայների իմաստները ոչ միշտ են համապատասխանում ածականների իմաստներին (հմտ. bas - ցածր և bassement - ստոր կերպով): Պատկերն ավելի պարզ կդառնա, եթե նշենք, որ մակբայների ցանկը հաճախ լրացվում է հենց իրենցով՝ ածականներով, առանց արտաքին ձևի փոփոխության, որն, ըստ էության, խոսքիմասային փոխանցում է (հմտ. une chaise basse - ցածր աթոռ, parler bas - ցածրաձայն խոսել, agir bassement - ստոր կերպով վարվել):

Ժամանակակից բառարաններն այսօր այնպիսի մակբայներ են նշում, որոնք նախորդ բառարաններում հիշատակված չեն: Բացի այդ, գեղարվեստական գրականության մեջ կամ մամուլում հանդիպում են այնպիսիք, որոնք բառարանային արժեք չունեն և մնացել են լոկ հեղինակային, անհատական գործածության շրջանակներում՝ մերժվելով լեզվում գործող օրինաչափությունների կողմից և կամ՝ չարժանաչալով հանրության հավանությամբ: Ուստի, առկա է մակբայացման խնդիր, որը լուրջ ուսումնասիրության կարիք ունի:

Հարցի պարզաբանման համար հարկ ենք համարում անդրադառնալ Գյուստավ Գիյոմի ստորագումային (պրեդիկատիվ) խոսքի մասերի (գոյական, ածական, բայ, մակբայ) տարբերակման սկզբունքին, որը հիմնվում է առնչության լեզվաբանական երևույթի վրա: Այդ սկզբունքի համաձայն, գոյականը միայն ներքին առնչություն ունի, այսինքն՝ լիովին համա-պատասխանում է այն հասկացությանը, որ նշանակում է: Օրինակ, «table» գոյականը միայն «սեղան» հասկացությանն է վերաբերում:

Ածականն իր հիմնական հասկացությանը վերաբերող ներքին առնչությանը զուգահեռ արտաքին առնչություն էլ ունի, քանզի միշտ որևէ գոյականական հենք ունի: Իրոք, beau (զեղեցիկ) ածականը չի կարող ասվել ինքն իրեն (եթե միայն որպես գոյական չի օգտագործվում) և պետք է անպայմանորեն ասվի որևէ անձի կամ առարկայի մասին, օրինակ, un bel homme (զեղեցիկ մարդ, տղամարդ), une belle auto (զեղեցիկ մեքենա) և այլն: Ընդ որում, ածականի համաձայնությունն այդ առնչության նշանն է:

Ածականի նման, բայն էլ ժամանակի մեջ ծավալվող հասկացության հանդեպ ներքին առնչություն ունի, ինչպես նաև առնչակից է տարածության մեջ գտնվող որևէ գոյականի: Օրինակ, chantait (երգում էր) կարող է ասվել միայն որևէ անձի մասին, une femme chantait (մի կին երգում էր): Ընդ որում, ի տարբերություն ածականի ձևաբանական տարբերակայնության, բայի ձևաբանական տարբերակայնությունը պայմանավորված չէ գոյականի ձևով: Այն թելադրված է բային հատուկ ձևով (սեռ, կերպ, ժամանակ, եղանակ, դեմք): Այդուհանդերձ, գործում է ենթակայի հետ բայի թվի համաձայնության սկզբունքը, որպես անվան հետ բայի արտաքին առնչության նշան:

Ջանի որ մակբայը, որպես անփոփոխ խոսքի մաս, զուրկ է սեռի, թվի, դեմքի, կերպի, եղանակի և ժամանակի հատկանիշներից, ուստի, որևէ այլ հատկանիշ չունի, քան առնչակից լինելը: Այլ կերպ ասած, մակբայը միասեռ և չեզոք առնչությամբ է օժտված: Ինչպես բայի կամ ածականի, այնպես էլ մակբայի դեպքում, առնչության երկու դեպքերն էլ առկա են. մի կողմից, հասկացության հետ ներքին առնչությունը, մյուս կողմից, բայի կամ ածականի նկատմամբ արտաքին առնչությունը, կամ ավելի լավ է ասել՝ առնչությունն ածականի կամ բայի առնչության նկատմամբ: Խոսքը, այսպիսով, երկրորդ աստիճանի առնչության մասին է:

Դիցուք, մեզ հետաքրքրում են բայի ու մակբայի ներքին ու արտաքին առնչությունների երկու դեպքերը: Այսպես, Pierre écoute attentivement

(Պիեռը լսում է ուշադիր, բառացի՝ ուշադիր կերպով) նախադասության մեջ անշուշտ լսելու գործողությունն է ուշադիք որակվում: Բայց գործող անձը ևս հատկանշվում է որպես այդպիսին: Այլ կերպ ասած՝ գործողությունն ու գործող անձը հատկանշվում են միաժամանակ՝ անբաժանելիորեն: Ղա գործողության առնչությունն է գործող անձի հետ: Խոսքն այստեղ, այսպես ասած, վաղ կամ նախնական առնչության մասին է, որը հանդես է գալիս երկու տարրերի միակցման պահին, երբ գործող անձը գործողության մեջ է մտնում:

Իսկ եթե խոսքն է՛լ ավելի վաղ առնչության մասին է, ապա չենք կարող մակբայի օգնությանը դիմել, և այս դեպքում ածականն է հանդես գալիս: Օրինակ, Pierre écoute attentif (Պիեռն, ուշադիր, լսում է), ուր attentif (ուշադիր) ածականը միայն գործող անձին է բնորոշում: Ածականի այս առնչությունը ցույց է տալիս, որ գործող անձին լրացնելու ընդունակ ածականը հեշտությամբ կիրառվում է նաև գործողության նկատմամբ, ուստի և տեղի է ունենում փոխանցում գործող անձից գործողությանը: Ածականը, այսպիսով, ընդարձակում է առնչության իր հնարավորությունները՝ դրանք շնչավորի ոլորտից անշունչի ոլորտը տարածելով: Այլ կերպ ասած՝ attentif-ը, որն ասվում է հիմնականում շնչավոր էակի մասին, փոխանցվում է այն գործողությանը, որի գործող անձը շնչավոր առարկա է: Այդ փոխանցումից ստացվում է attentivement մակբայը: Այսպիսով, մակբայորեն կենսունակ են հատկապես այն ածականները, որոնք լրացնում են շնչավոր առարկաները:

Pierre attend vainement (Պիեռը զուր է սպասում) նախադասության մեջ զուր է որակվում attendre (սպասել) բայի իմաստային հիմքը, այն է՝ բային ամրացած սպասման հասկացությունը՝ անկախ գործող անձի նկատմամբ բայի ունեցած վերաբերությունից: Այդ որակումն այստեղ ուշացած է և հանդես է գալիս միայն իբրև հետևանք, հետևաբար կարող ենք ասել, որ մակբայի առնչությունն այս դեպքում ավելի շատ բայի ներքին առնչությունն է շոշափում:

Մակբայի առնչության հետևանքային բնույթն առավել հստակ է հանդես գալիս այն դեպքում, երբ բայը խնդիր ունի: Օրինակ, Je conserve précieusement cette lettre (Ես խնամքով պահում եմ այդ նամակը): Այստեղ մակբայն առնչվում է բայից ու խնդրից կազմված բայական ողջ շարույթի հետ:

Այսպիսով, -ment-ով մակբայը որակում է միաժամանակ գործողությունը ու նրա խնդիրը: Մակբային ամրացած իմաստն այս դեպքում ավելի հաճախ գործողության ձևի գաղափարն է:

Սակայն, կան դեպքեր, երբ գործողության արդյունքն է պետք որակել: Այդ արդյունքն անվանական բնույթ ունի, հետևաբար մակբայն ստանում է ածականի ձև՝ մերժելով -ment ածանցը, օրինակ, chanter faux (սխալ երգել), chanter fort (բարձր, ուժգին երգել) և այլն: Այստեղ chanter (երգել) գործողությունից ստացվող երգն է որակվում faux (սխալ), fort (բարձր, ուժգին) և այլն, այլ կերպ ասած՝ chanter fort -ում chant-ը (երգ), իբրև գործողության անվանական հետևանք, արդյունք, որակվում է faux (սխալ), fort (բարձր, ուժգին) և այլ ածականներով: Տեղի է ունենում բայով ոչ բացահայտորեն արտահայտված ներքին առարկայի (խնդրի) բնութագրում: Ժ. Սուանյեն իր հոդվածներից մեկում գրում է. «Ինչպես Գ.Գիյոմն է նշում իր անտիպ մի աշխատության մեջ՝ chanter fort (բարձր, ուժգին երգել) կապակցության մեջ անվանականորեն արտահայտված երգն է բառածածան հայտարարված, իսկ penser fortement (խորը մտածել) կապակցության դեպքում բայով արտահայտված մտավոր գործողությունն է խոռո որակված» (1):

Ներքին առարկայի կամ ինչպես Կլոդ Գիմյեն է անվանում «հետևանքային անձի» (personne d'effection, PE) հետ մակբայացած ածականի առնչությունը վաղ կամ նախնական առնչություն է (2): Ընդ որում, Sujet + Prédicat (ենթակա + ստորոգյալ) տիպի նախադասության մեջ այդ առնչությունը հանդես է գալիս ստորոգյալի ի հայտ գալու պահին, մինչ ենթական ստորոգյալի հետ կապող առնչության ծագելը, որտեղից էլ առաջանում է կարճ մակբայի և բայի ծուլման տպավորություն, այն ինչ հաճախ նշում են քերականագետները: Նույնիսկ երբեմն խոսվում է «բայական կապակցությունների» մասին (locutions verbales) (3): Այսպես, tenir bon (հաստատակամ լինել), parler bas (ցածրաձայն խոսել), travailler ferme (շատ աշխատել), boire frais (սառը վիճակում խմել), refuser net (կտրուկ մերժել), manger gras (յուղոտ բաներ ուտել) և այլն:

Դա չի նշանակում, սակայն, թե ամեն մի ածականի մակբայական գործածությունը խրախուսելի է: Օրինակ, *chanter agréable (հաճելի երգել) կապակցության մեջ chanter բայն ու agréable ածականն անհամակցելի են, ուստի գործնականորեն այդ կապակցությունն արդի ֆրանսերենում անհնար է: Կարելի է արդյոք սրանից ենթադրել, որ կարճ ձևի հետ անհամատեղելի է զգայական և հոգեկան զնախառն իմաստը: Միևնույն բայի հետ օգտագործ-

ված երկու տիպի մակբայները համեմատելիս (օրինակ, parler bas և parler bassement, parler fort և parler fortement), պարզ է դառնում, որ այսպես կոչված «կարճ» մակբայը հիմնականում ֆիզիկական բնութագրման իմաստ է պարունակում, մինչդեռ –ment-ով մակբայը հոգեբանական բնութագրման ածանցյալ իմաստ ունի: Հատկանշական է, որ կան մաս այնպիսի կարճ մակբայներ, որոնց –ment ածանցով ոչ մի մակբայ չի համապատասխանում. հմնտ. sonner creux – խուլ հնչել, jouer serré – զգույշ, առանց ռիսկի դիմելու խաղալ, շրջահայաց գործել, parier gros – մեծ գումարի վրա գրազ գալ, rire jaune – կեղծ, բռնազբոս(իկ) ծիծաղել և այլն:

Chanter fort տիպի բառակապակցությունները մինչև անցյալ դարի առաջին կեսը շատ չէին, ուստի և նրանց կիրառությունների և բայերի հետ նրանց կապակցության եղանակների բազմազանությունն առանձնապես ուշադրություն չէր գրավում: 20-րդ դարի կեսերին այդպիսի բառակապակցությունները բազմապատկեցին, գործընթացն էլ ավելի զարգացավ զանգվածային լրատվամիջոցների, հատկապես գովազդների տարածմանը զուգընթաց: Հայտնի է, որ հատկապես գովազդի լեզուն է մպաստել նրան, որ մակբայացած ածականները լայն կիրառություն ստանան ժամանակակից ֆրանսերենում: Այս հանգամանքն էլ մակբայացած ածականների, որպես առավելագույն չափով խնայողական ու կարճառոտ տիպի, զարգացման ու ծավալման հզոր գործոն հանդիսացավ: Սակայն, կարծության մկատմամբ ակնհայտ ճաշակը հաճախ զուգորդվում է անգլիամոլությամբ: Բազմիցս քննադատվել է, օրինակ, voter utile (օգտավետ քվեարկել) արտահայտությունը անգլերենի համաբանությամբ: Նշենք ուրիշ օրինակներ. «A notre rayon confection, vous vous habillez impeccable et moins cher» (Պատրաստի հագուստի մեր բաժնում դուք անթերի և էժան կհագնվեք), կամ «Le Fritz mitraille épouvantable» (Ֆրիցը սարսափելի է կրակում, զնդակոծում) կամ էլ բանավոր խոսքում օգտագործվող «Vous vous rasez électrique ?» (Դուք էլեկտրակա՞ն (այսինքն՝ էլեկտրական սարքո՞ւ) եք սափրվում) և այլն:

Այս օրինակներում կարճ մակբայը կարծես ձգտում է դուրս գալ սեփական ոլորտից, այն է՝ վերնում նշված ներքին առարկայի (PE) բնութագրման ոլորտից: Նման կիրառություն ենթադրվում է անցողական բայերի հետ: Այստեղ տեղին է նշել «A Versailles il en obtiendrait facile, facile, le

triple» (վերսալում դրանից հեշտ, հեշտ, եռակի անգամ հեշտ ծեռք կրերեր) նախադասությունը փարիզցի առևտրականի խոսքից կամ «envoyer qn direct à l'hôpital» (ինչ-որ մեկին ուղիղ հիվանդանոց ուղարկել) ժողովրդա-խոսակցական արտահայտությունը (օրինակները քաղված են ժ. Մուանյեի հոդվածից, տե՛ս գրականության ցանկը, 1):

Արդ, ի մի բերելով վերևում ասվածը, կարելի է ճշտել ածականի, -ment ածանցով մակբայի և մակբայացած ածականի գործունեության ոլորտները: Ածականի դեպքում բնութագրումը վերաբերում է միայն զոռոժոռ անծին և տեղի է ունենում համաձայնության ենթարկվող ածականով (Pierre écoute attentif), -ment-ով մակբայի դեպքում բնութագրումը վերաբերում է զոռոժոռությանն կամ վեռօհինս՝ զոռոժոռ անծի հետ միասին (Pierre écoute attentivement - մակբայի վաղ առնչություն), կամ էլ հետևանքային անուամի՝ նեռօհն առադևաի հետ միասին (Pierre attend vainement - մակբայի ուշ առնչություն), մինչդեռ կարճ մակբայի դեպքում բնութագրումը տեղի է ունենում մակբայացած չեզոք ածականով, որն ի դեպ ենթակայի հետ չի համաձայնեցվում, որովհետև նրան չի բնութագրում, փոխարենը՝ համաձայնում է բալի հմատալին հիմօռ կազմոռ չեզոք հասկացության հետ (Pierre chante fort):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Gerard Moignet. L'incidence de l'adverbe et l'adverbialisation des adjectifs. Travaux de linguistique et de littérature. 1, Strasbourg, 1963, p.175 -194.
2. Claude Guimier. Sur l'adjectif invarié en français. Revue des langues romanes. Tome XCIII, N1, 1989, p. 109 - 120.
3. K. Nyrop. Grammaire historique de la langue française. Tome V, Gyldendal, Copenhagen, 1903 - 1930, p. 151.
4. Ա. Դ. Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն - ռուսերեն - հայերեն բառարան, «Ապոլոն» հրատարակչություն, Եր., 1993: